

թեան արժանի է նաև Ս. Մատթէոսի և Ս. Ղուկասու խորհրդանշաններուն քանդակագործութիւնը: Պատկերամարտներու հերետիկոսութենէն յետոյ անսովոր դարձած կենդանի էակներու քանդակաւ պատկերները ընդհանրապէս քրիստոնեայ Արևելքի հին քանդակագործութիւններու մէջ խիստ հազուագիւտ են: Բայց, ինչպէս նաև այսօր, վեցթեան քերովէներ, աւետարանական խորհրդանշաններ երբեմն բացառութիւն կազմեցին, ինչպէս տակաւին կը հաստատուի վերին Սիւրիոյ Քալպ-Լուզէէի Զ. գարու գեղեցիկ եկեղեցիին մէջ:

Բայց գոնէ գմբէթը Յուստինիանոսէն յառաջ չէ: Քառակուսի յատակազիծի մը վրայ արդէն բարձրացած առանց թըմբուկի (tambour) գմբէթներ Դ. դարուն գոյութիւն ունէին: Կոստանդինոսոս նոյն դարուն շինել տուած է գմբէթ մը, Պոլիս, Ս. Առաքելոց նշանաւոր մայր եկեղեցիին մէջ:

Ճարտարապետները որոշ կերպով կը զատեն Կոստանդինեան գմբէթները Յուստինիանոսեան շրջանի գմբէթներէն, վասն զի վերջիններս են. 1. թեթև, 2. ծակուած բազմաթիւ պատուհաններ, 3. խիստ մեծ շինուած աչքի հրապուրիչ ձևով: Այսպէս Պոլիս Ս. Սոփիոյի հոյակապ մայր եկեղեցիին մեջ ամէն հոգ տարուած է գմբէթին, և սեղանը երկրորդական տեղ մը միայն կը զբաւէ: Միևնոյն նկարագիրները կը զիտուին Երուսաղէմի մշտ Ս. Սաչ եկեղեցիին մէջ, որ նմանապէս Յուստինիանոսի կ'ընծայուի: Ընդհակառակն Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցիին մէջ գմբէթը՝ առանց թմբուկի և գմբէթարդներու (pendentif) վերայ, խիստ թանձր է և միայն չորս պատուհաններով: Ասկէջ զատ, գմբէթը կը պահէ իր կրօնական նկարագիրը, իր առաջին յօրինուածութիւնը, իբր ընդարձակ ամպշովանի մը կը ծածկէ սեղանը, և անտարակոյս նաև, ինչպէս Նախկին եկեղեցիներու մէջ, գմբէթը կը ծածկէ գետնադամբանը (crypte) և գերեզմանը:

Բայց ուրիշ պարագայ մ'ալ պէտք է նկատի առնել Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցիին մէջ, որ է հին դարերու այնքան ծանօթ խորհրդանշաններու խորհրդաւոր լեզուն: Զեռնհաս ճարտարապետներ և հնախօսներ գիտակ են թէ հին եկեղեցիներուն մէջ դուռներու, պատուհաններու, վիմաշարքերու թիւը, համաչափ միութեամբ պարզած տարածութիւններն իսկ ունին իրենց խորհրդաւոր նշանակութիւնները: Աւելի զօրաւոր պատճառով,